## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

### 19.04.2019թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԹԻՎ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «22» մայիսի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Գրիգորյանի, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 19.04.2019թ. կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Պայմանագրով սահմանված՝ մատակարարման ենթակա 696 հատ արտադրական հատուկ հագուստից (հանդերձանք) ֆինանսական միջոցներ հատկացվել են 679 հատ արտադրական հատուկ հագուստի (հանդերձանք) մատակարարման համար՝ Կողմերը որոշեցին հատկացված ֆինանսական միջոցների մասով հաստատել Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» վերտառությամբ Հավելված N 2-ը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ով նախատեսված 696 հատ արտադրական հատուկ հագուստից (հանդերձանք) մնացած 17 հատ (1 221 264.19 ՀՀ դրամ ընդհանուր գնով) արտադրական հատուկ հագուստի (հանդերձանք) մատակարարումը կիրականացվի համաձայն Պայմանագրի 8.13 կետի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 1930048861340100 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00885285 |
| ՀՀ ՖՆ պետական գանձարանի գործառնական գոտի | «Կոմերցիոն բանկ Արարատ» ՓԲԸ |
| տնօրեն Կ. Փոլադյան | տնօրեն Լ. Գրիգորյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

**Հավելված N 1**
**«22» մայիսի 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի**

(Հավելված N 2
« 19 » ապրիլի 2019 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պայմանագրի)

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | |
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 18111100/501 | Արտադրական հատուկ հագուստ (հանդերձանք) | 24 389 364 | 36 584 046 | 36 584 046 | 36 584 046 | 48 778 728.53 | 48 778 728.53 | 48 778 728.53 | **48 778 728.53** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
L.S

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2
Հ/Հ՝ 1930048861340100
ՀՎՀՀ՝ 00885285
«ԿոնվերսԲանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Լ. Գրիգորյան

/ստորագրություն/
L.S